ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Առաջին Հանրապետության օրվա առթիվ:

Մայիսի 28-ը մեր պատմական ու հատկապես մայիսյան հաղթանակների հանրագումարն է: Միևնույն ժամանակ նշանակալի այս օրը խորհրդանշում է մեր ժողովրդի վերածնունդի մեկնարկը, քանզի 1918թ.մայիսի 28-ին հայ ժողովուրդն իր անկոտրում կամքով և միասնական ոգով հաստատեց ամուր պետականություն ունենալու իր իրավունքը:

Այսօր էլ չնայած բոլոր դժվարություններին, ես համոզված եմ, որ նույնպիսի միասնականությամբ այսուհետ ևս շարունակելու ենք և ոչինչ չենք խնայելու մեր ջանքերը ժողովրդավարական արժեքների վրա հիմնված մեր անկախ պետականությունն ամրապնդելու, տնտեսությունը զարգացնելու, մեր բոլոր ձեռքբերումները պահպանելու և ամրապնդելու գործում:

Այսօր ևս, ինչպես ցանկացած տոնի և իրողության ժամանակ և մեր լինելիության ամեն մի դրվագում չենք կարող չհիշել մեր բոլոր նահատակված հայորդիներին , որոնց շնորհիվ մենք այսօր վայելում ենք խաղաղ օրերի բերկրանքը, շարունակում ենք արարել և ապրել մեր հայրենի հողի վրա:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիս այս գեղեցիկ տոնի՝ Առաջին հանրապետության օրվա առթիվ: Մաղթում եմ ամուր հավատ, միասնականություն և դժվարությունները դիմագրավելու կամք ու տոկունություն:

Կեցցե՛ Մայիսի 28-ը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման օրը,

Կեցցե՛ Հայոց հաղթանակած Բանակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ